«Հաստատում եմ»
Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի
նախագահ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«11» դեկտեմբերի 2025թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2026 թվականի ծանրամարտի Հայաստանի Հանրապետության առաջնությունների (մեծահասակների, երիտասարդների և պատանիների) ՝

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2026 թվականի ծանրամարտի Հայաստանի Հանրապետության առաջնությունների անցկացումն ուղղված է՝

- Մարզաձևի զարգացմանն ու մասսայականացմանը,
- Մարզիկների մարզավիճակի գնահատմանը և ուժեղագույնների հայտնաբերմանը,
- ՀՀ ազգային հավաքական թիմերի ձևավորման համար անհրաժեշտ մարզիկների հայտնաբերում և նրանց մրցունակության գնահատում
- Առաջատար փորձի փոխանակում մարզիկների , մարզիչների և մրցավարների միջև ,
- Հանրապետության մարզական կազմակերպություններում ծանրամարտի զարգացման համար կատարած աշխատանքների արդյունքների ամփոփում :
-

2.ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՎԱՅՐԸ

N	Միջոցառման անվանում	Ժամկետ	Վայր
1	ՀՀ տղամարդկանց և կանանց առաջնություն (ծնված ՝ 2009թ.)	Փետրվարի 12-15	Երևան
2	ՀՀ երիտասարդների և աղջիկների առաջնություն (ծնված ՝ 2006-2008 թթ.)	Հուլիսի 22-26	Ջրառատ
3	ՀՀ պատանիների և աղջիկների առաջնություն (ծնված ՝ 2009-2012 թթ.)	Մայիսի 10-14	Երևան

Ծանոթություն – Մասնակցությունը կթույլատրվի մարզիկների ծննդյան համապատասխան տարեթվերով:

3. ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Ծանրամարտի Հայաստանի Հանրապետության առաջնություններին թույլատրվում է մասնակցել ՀՀ քաղաքացի հանդիսացող մարզիկ /ուհի – ներին անձը հաստատող փաստաթղթով , ՀՀ մարզերի , ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցների , ՄՊՎԴ – ի , ՕՀՊՄՔ- ների , ՕՀՈՒ-ի, մարզական կազմակերպությունների , ակումբների, գերատեսչությունների հավաքական թիմերը :

4. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Բոլոր առաջնություններն անհատական են և անց են կացվում Միջազգային Ծանրամարտի ֆեդերացիայի (IWF) կանոնադրության համաձայն :

5. ՔԱՇԱՅԻՆ ԿԱՐԳԸ

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐ		ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ		ՊԱՏԱՆԻՆԵՐ	
ՏՂԱՄԱՐԴԻԿ	ԿԱՆԱՅՔ	ՏՂԱՆԵՐ	ԱՂՋԻԿՆԵՐ	ՏՂԱՆԵՐ	ԱՂՋԻԿՆԵՐ
60 կգ	48 կգ	60 կգ	48 կգ	56 կգ	44 կգ
65 կգ	53 կգ	65 կգ	53 կգ	60 կգ	48 կգ
71 կգ	58 կգ	71 կգ	58 կգ	65 կգ	53 կգ
79 կգ	63 կգ	79 կգ	63 կգ	71 կգ	58 կգ
88 կգ	69 կգ	88 կգ	69 կգ	79 կգ	63 կգ
94 կգ	77 կգ	94 կգ	77 կգ	88 կգ	69 կգ
110 կգ	86 կգ	110 կգ	86 կգ	94 կգ	77 կգ
+110 կգ	+86 կգ	+110 կգ	+86 կգ	+94 կգ	+77 կգ

6. ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՐԿԱՄԱՐՏԻ ԱՐԴՅՈՒՆՔ

1. Մեծահասակներ ՝
2. Կանայք, (անսահմանափակ)
3. Երիտասարդների ՝ մինչև 20 տարեկան
4. Կանայք, երիտասարդներ (անսահմանափակ)
5. Պատանիների՝ մինչև 17 տարեկան
6. Աղջիկների՝ մինչև 17 տարեկան (անսահմանափակ)

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐ

60 կգ	**65 կգ**	**71 կգ**	**79 կգ**	**88 կգ**	**94 կգ**	**110 կգ**	**+110 կգ**
180 կգ	190 կգ	200 կգ	210 կգ	230 կգ	250 կգ	270 կգ	290 կգ

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

60 կգ	**65 կգ**	**71 կգ**	**79 կգ**	**88 կգ**	**94 կգ**	**110 կգ**	**+110 կգ**
180 կգ	190 կգ	200 կգ	210 կգ	220 կգ	230 կգ	240 կգ	260 կգ

ՊԱՏԱՆԻՆԵՐ

56	**60 կգ**	**65 կգ**	**71 կգ**	**79 կգ**	**88 կգ**	**94 կգ**	**+94 կգ**
140 կգ	150 կգ	160 կգ	170 կգ	180 կգ	190 կգ	210 կգ	220 կգ

7. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մրցումների անմիջական անցկացումն իրականացվում է **ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ** կողմից:

8. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Յուրաքանչյուր քաշային կարգում անհատական տեղերը որոշվում են Միջազգային ծանրամարտի ֆեդերացիայի կանոնադրության և մրցումների անցկացման կանոնակարգի համաձայն ՝ հիմնվելով միայն երկամարտի ընդհանուր արդյունքի վրա (պոկում + հրում): Այսպիսով՝ հաղթող է ճանաչվում այն մարզիկը, որի երկամարտի գումարը ամենաբարձրն է տվյալ քաշային կարգում:

9. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

- Մրցանակային տեղեր գրաված մարզիկները պարգևատրվում են համապատասխան պատվոգրերով, մեդալներով (պոկում, հրում, երկամարտ) և դրամական պարգևներով: Դրամական պարգևները տրամադրվում են ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N 692-Ն որոշման համաձայն՝ մեծահասակների և երիտասարդների տարիքային խմբերում մրցող մարզիկներին:
- Մեծահասակների և երիտասարդների մրցումների հաղթող մարզիկների անձնական մարզիչները պարգևատրվում են հավաստագրերով և դրամական պարգևով (համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N 692-Ն որոշման) :

- Մրցանակային տեղեր գրաված պատանիները և աղջիկները պարգևատրվում են համապատասխան պատվոգրերով, մեդալներով (պոկում, հրում, երկամարտ) և դրամական պարգևներով: Դրամական պարգևները տրամադրվում են Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի կողմից:
- Պատանիների առաջնությունների հաղթող մարզիկների անձնական մարզիչները պարգևատրվում են հավաստագրերով և դրամական պարգևով (Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի կողմից) :

10. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Ծանրամարտի Հայաստանի Հանրապետության առաջնություններում մարզիկների, մարզիչների գիշերավարձի, սննդի վճարի, ինչպես նաև մրցավարների գործուղման , մրցավարների սննդի օրական վճարման ծախսերը կատարում է Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիան ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորման հաշվին (համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N 692-Ն որոշման և ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի N 1563-Ն որոշման) :
Մարզիկների և մարզիչների ճանապարհածախսը հոգում են գործուղող կազմակերպությունները :

11. ՀԱՅՏԵՐԸ

Նախնական հայտերը ներկայացվում են Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա, մրցումներից մեկ ամիս առաջ , որից հետո թիմը կստանա մրցումներին մասնակցելու պաշտոնական թույլտվություն:Առանց Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիայի պաշտոնական թույլտվության մրցումներին չի թույլատրվում մասնակցել : Վերջնական հայտերը ներկայացվում են մրցումների սկսվելուց տասնհինգ օր առաջ : Իսկ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացվում են գլխավոր մրցավարական հանձնաժողովի ժամանման օրը :

Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա
Հասցե ՝ ք. Երևան , Իսահակյան 28/3,
Հեռ.՝ +374 98 24 72 54
Էլ. հասցե ՝ secretariat.wfa@gmail.com